

ՄՈՎԱՅԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ»
ՆՎԻՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

(Փարիզ, 1991 թ. հունվարի 25—26)

Բոլորից է հայ միջնադարյան պատմագրության գլուխգործոց, համաշխարհային պատմագրության նրևելի կոթող՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը Արգեն անցած, 1990 թ. քայլեր են սրվել սյգ հորեյանը նշելու կապակցությամբ: Մի յարթ դրեք են հանձնվել ապագրության, այդ թվում՝ «Հայոց պատմության» բնագրի բնական «բատարակության» նորագյուտ ձեռագրերի տարբերություններ պարունակող հավելվածով լրացված տարրերակր, «Հայոց պատմության» ռուսերեն նոր թարգմանության նոր հրատարակությունը, Մովսես Խորենացու գրչին վերագրվող «Պիտոյից գրքի» քննական տեքստը, «Հավանենա Դրասխանակերտցու» «Պատմությունը» և Մովսես Խորենացին մենագրությունը, «Հայոց պատմության» նվիրված գիտահանրամատչելի գրքուկներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով և այլն: Դրանք բոլորի շուտով յույս են տեսնելու Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» արգիակալությունը ցուցադրող վավերագրական կիսնակար է պատրաստում Հայֆիլմը: Արասահմանում նույնպես քայլեր են արվել Խորենացու և նրա «Հայոց պատմության» ռուսերեն տարգմանության արժանավայել նշելու ուղղությամբ: Գեոևս անցյալ տարվա հոկտեմբերի 10—14-ին Իտալիայի Բոլոնյա քաղաքում «Հայագիտական ռուսամասերությունների միջազգային ընկերության» (AIEA, ընդգրկում է հիմնականում Եվրոպայի շուրջ 200, մեծ մասամբ օտարազգի հայադեանների պրեզիդենտ՝ պրոֆ. Մայքլ Աթոուն Երուսաղեմից) կազմակերպած 5-րդ կոնֆերանսում երկու լիազորմար նիստ է հատկացվել Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը», որտեղ լավ և նախնիկ Սիմոնյանի, Գեորգ Տիբացյանի, Գադիկ Սարգսյանի, Զուսա Տրախանյի ղեկուցումները (մանրամասն տե՛ս «Հայաստան» օրաթերթ, 1990, դեկտեմբերի 11):

Մրագրվում է անցկացնել հորեյանական գիտաժողով նաև Լոս Անջելեսում:

Ընթացիկ 1991 թ. հունվարի 30-ին, Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի Պոլ Վալերիի անվան համալսարանում հորեյանական միջոցառումների շրջանակում համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի համար տեղի ունեցավ Գադիկ Սարգսյանի ղեկուցումը՝ «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» թվային

Դրանից մի քանի օր առաջ, հունվարի 25—26-ին Փարիզում անց կացվեց Մովսես Խորենացուն նվիրված առաջին միջազգային գիտաժողովը՝ «Մովսես Խորենացին և հայ պատմագրության ակունքները»:

Գիտաժողովը կազմակերպված էր Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի և Հայ սփյուռքի հետազոտական կենտրոնի կողմից, Բյուզանդիայի պատմության և քաղաքակրթության կենտրոնի, «Կոլեժ դը Ֆրանս»-ի, Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) մասնակցությամբ և «Փաքիդ—1» համալսարանի ու Փարիզի պատմական և իրավագիտական հետազոտությունների կենտրոնի օժանդակությամբ, որի ղահլեում էլ, ի դեպ, կայացան նիստերը Գիտաժողովի անմիջական կազմակերպիչներն էին ՀԳԱ արտասահմանյան անդամ, պրոֆ. Ժան-Պիեռ Մահեն, պրոֆ. Տիգրան Գույումյանը, Ժան-Կլոդ Քերարյանը:

Գիտաժողովին ղեկուցումներով հանդես գալու համար հրավիրված էին աշխարհի 12 հայադեաներ, Բոլոր ղեկուցումները և ելույթները ֆրանսերեն լեզվով էին:

Բացման խոսքում արժեքավորվեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» նվիրված առաջին միջազգային գիտաժողովի՝ հատկապես Ֆրանսիայում, հայագիտության համաշխարհային կարևորագույն կենտրոններից

հարաբերական ժամանակագրության վերաբերյալ, Դրանից բացի, կարելի է հարց տալ, ինչպես դա ժամանակին արևց կոնիերբը հակաճանաչող կարիերին, թե խորհնացու և հուսական հեղինակների միջև եղած գոգահեռությունները չլին արտացոլում արդյոք պարզապես այն հանգամանքը, որ նրանք ընդհանուր աղբյուրներից են օգտվել, և կամ չի՞նք ուղղել, արդյոք, խորհնացին ինքը որոշ հայկական տարրերակների մշակման վրա»:

Ժ.-Պ. Մահեն ամփոփում է իր զեկուցումը, առաջարկելով «Հայոց պատմության» հետադա հետազոտությունների շատ կոնստրուկտիվ ուղղություն, այն է. «Կարելի է հետևել Ռիսթրեն Լորայրներին, որոնք այդ վեճը թողել են չլուծված, և թե ժամանակավորապես հետադարձ խորհնացու ժամանակաշրջանի հարցը, շարունակելով հետազոտությունները նրա աղբյուրների ու տեղեկությունների որակի վերաբերյալ: Հաջողությունները հայդրականության, ժամանակագրության և, հատկապես, թարգմանության բնագավառում, անկասկած, կհանդեսանան նաև այդ խնդրի լուծմանը»:

Մնացած զեկուցումները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի: Դրանցից մեկում քննարկվում են «Հայոց պատմության» վերջին օրինաչափությունները, պատմահոր կիրառած ալլեայլ ստեղծագործական մեթոդները, նրա պատմական կոնցեպցիայի և այլ նմանօրինակ խնդիրները:

Այսպես, հայր Պողոս-Լևոն Զեքիյանը, վերհանելով իր զեկուցման մեջ Մովսես խորհնացու «Պատմության» սահուն ու իրապատկական շարադրանքի տակ թաքնված կատարածարանական (կոստուդիական) հենքը, ասում է. «Կատարածարանություն իր բնույթով ենթադրում է լարում և, նույնիսկ, խզում: Լարում ընթացքի և այդ իսկ ընթացքի ալիքի կամ պակաս կտրուկ դադարեցման միջև: Սակայն կատարածարանական խնդիրը բարդանում է խորհնացու մոտ կատարածարանություն շատ ուժեղ իդեալականացման և, հետևապես, «դադարաբանականացման» պատճառով, այն, թվում է, զարմանալի կերպով մտքովում է պատմության ընթացքի իսկ մեջ, որը (պատմությունը), այնուհանդերձ, շարունակվում է և չի ավարտվում»:

Անսովաժարանության պրոֆեսոր Գրիգոր Բելիյանը, Մովսես խորհնացու կողմից պատմության շարադրանքի ստեղծման հիմնական զղղությունը բնութագրելիս, գտնում է, որ պատմահոր համար «Պատմությունը գրելը պատմական հաղորդումները կարգի բերելն է, ծա-

գումնարանության և ժամանակագրության օգնությամբ կազմակերպելը, անարխիայի վերացումը, նրանց վերածումը մոնումենտալ արձանագրության»:

Գրող Մարկ Նիշանյանը, կենտրոնացնելով իր ուշադրությունը հայ մատենագրության մեջ ժողովրդական բանավոր պատմվածքի վերարտադրման վրա, իր զեկուցման մեջ գտնում է, որ ի տարբերություն նոր ժամանակների, «V դարում ազդագրագիտական գիտակցությունը բացակայել է» և որ այդ հանգամանքը «առաջ է քաշում այն հարցը, թե ո՞րն էր ժողովրդական պատմվածքի և, ի վերջո, բանավոր զրականության ղեկը Փավստոսի և Մովսես խորհնացու մոտ, որոնց ստեղծագործություններում դրանց յուրացումը կարևոր դեր է խաղում: Սա մտածել է տալիս, թե ինչ ասել է պատմվածքը: Պատմիչը օգտագործում է տարբեր տիպի պատմվածքներ. իրադարձությունների շարադրում, մարտիրոսների մասին պատմություններ՝ սրբավայրերի շուրջը, դիցաբանական պատմվածքներ: Փոխակերպումը գրավոր ձևի յուրաքանչյուր առանձին դեպքում տարբեր է: Մենք ցույց կտանք, թե ինչպե՞ս է կատարվում այդ փոխակերպումը, մի կողմից Բուզանդարանում, մյուս կողմից, Մովսես խորհնացու մոտ: Դա կհանգեցնի մեզ պատմական ժանրի, որը նույնպես պատմվածքի ժանր է, ծննդյան քննարկմանը, սկզբնաժամայն աղավաղումներից ու վերամշակումներից, որոնց ենթարկում են տարբեր տեսակի բանավոր պատմվածքները»:

Մովսես խորհնացու «Հայոց պատմության» շարադրանքի ներքին օրինաչափությունների և արտաքին կողմնորոշումների բացահայտման էր վերաբերում նաև երիտասարդ իտալացի հետազոտող, խորհնացիագիտության բնավայրը վերջին տարիները ոտք դրած դոկտոր Զուստո Տրախնայի զեկուցումը: Նա արդեն հրատարակության է հանձնել «Մովսես խորհնացին և հայ պատմական մտքի ակունքները» իր մենագրությունը, որը լույս կտեսնի Վենետիկում ընթացիկ տարում ու ևս մի ներդրում կլինի «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակի հանդիսությունների մեջ: Փարիզյան իր զեկուցումը նա նվիրել էր, իր իսկ խոսքով ասած, «խորհնացու պատմական մտքի վերլուծությանը, կարճ ասած՝ նրա վերահանգումները որպես հեղինակի: «խորհնացին», — շարունակում է նա, — այդ առումով, փաստորեն, ալիքի «արևելյան» կամ, ալիքի ճիշտ, բայց հանդակման հեղինակ է, քան «արևմտյան»... Շատ դժվար կլինի շարադրել այն բոլոր փաստարկները, որոնք ինձ հանգեցրին ալման-

Վաղարշապատ՝ Նրուսաղեմի, ապա Հյուսիսում
զանվող Սևպուհ լեռտե, ապա և Կորդուբի Ա-
րարսող լեռան վրայով, որի վրա Հերավի քա-
ղաքում է Մովսես Խորենացու՝ «Մանեայ
այլք»-ի մասին հաղորդման ազդեցությունը:

Բավարարությանը պիտի նշել, որ միջադ-
դային դիտաժողովը ցույց տվեց, որ արդի ար-
տասահմանյան խորենացիադիտության մեջ,
փոքր բացառություններով, «Հայոց պատմու-
թյան» նկատմամբ երբեմնի կիրառված դեր-
բնագատակտն վերարեբանքը այսօր որո-
շակի տեղատվություն է ապրում:

Փարիզյան գիտաժողովը, ինչպես և վերը
թվարկված այլ իրականացված կամ իրա-
կանացվող միջոցառումների շարքը, նախոր-
դում ու նախապատրաստում են ընթացիկ
տարվա աշնանը ծրանում կայանալիք՝ Մով-
սես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծ-
ման 1500-ամյակի տոնակատարության հիմ-
նական հանդիսությունները:

ՀԳԱ. Եկադեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ.